

"15" հունվարի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

15 հունվարի 2002 թվականի N 41

ՀՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿԼԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի "Հայաստանի Հանրապետությունում 2001-2004 թվականների ընթացքում համապատասխան բնագավառների տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակացույցը հաստատելու մասին" N 852 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի նոյեմբերի 22-ի N 822 որոշման խմբագրությամբ) հաստատված ժամանակացույցի 123-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հրագործական արտադրատեսակներին ներկայացվող անվտանգության պահանջներն ու դրանց փորձարկման մեթոդները պետք է համապատասխանեն ՀՍ 214-2001 "Արտադրատեսակներ հրագործական. Անվտանգության ընդհանուր պահանջներ" եւ ԳՕՍՏ Ռ 51271-99 "Արտադրատեսակներ հրագործական. Սերտիֆիկացման փորձարկումների մեթոդներ" ստանդարտների պահանջներին.

բ) ներմուծվող եւ արտադրվող հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման) հրահանգն ու փաթեթվածքների վրայի մակնշվածքները պետք է շարադրված լինեն հայերենով կամ գուգակցվեն այլ լեզուներով՝ համաձայն պայմանագրի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը՝ մինչեւ 2002 թվականի մարտի 1-ը հաստատել հրագործական արտադրատեսակները պահելու եւ դրանք զանգվածային միջոցառումների ժամանակ օգտագործելու կանոնները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 15-ից: